ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.04.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 48/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և «Գոց» ՍՊԸ-ի 10.04.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Այնթապի համայնքապետարանի կողմից հայտարարված «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 19.04.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և «Գոց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն և «Գոց» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություններ) 10.04.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել են, որ բողոքի առարկա է հանդիսանում՝ «Արարատի մարզ, Այնթապի համայնքապետարանի»-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով մրցույթի անցկացման ընթացակարգը, Այնթապի համայնքապետարանի հանձնաժողովի կողմից «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և «Գոց» ՍՊԸ-ի հայտերի փաթեթը չվերցնելը և մերժելը, որի արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Բողոքի պահանջն է՝ կասեցնել 07.04.2017թ. «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի ցանկացած գործողության իրականացումը և դադարեցնել գնման ընթացակարգ հայտարարելու մասին «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ չեղյալ հայտարարել գնման ընթացակարգը:

Որպես բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցներ Ընկերությունները նշել են, որ պատվիրատուն սահմանափակել է ընկերությունների մասնակցության իրավունքը, զրկել է արդար և մրցակցային գնման մասնակցելու հավասարությունից, միասնական կանոններով չի եղել: Հատուկ նշվել է ժամը 09:00-ն, որի արդյունքում նույնպես արհեստական խոչընդոտներ են ստեղծել հայտը ներկայացնելու համար՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների պահանջները:

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և «Գոց» ՍՊԸ-ի աշխատակիցները ժամը 08:30-ից եղել են Այնթապի համայնքապետարանում: Ժամը 09:00-ին ներկայացել է գնահատող հանձնաժողովի քարտուղար Ս.Բաղդասարյանը, ով էլ չի վերցրել և մերժել է վերը ներկայացված կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի փաթեթները, պատճառաբանելով, որ հայտերի ներկայացման ժամկետը մինչև ժամը 09:00-ն է, ինչի վերաբերյալ ներկայացրել է գրավոր պարզաբանում: Այնուհետև կայացել է այսպես կոչված «նիստը», որտեղ հանձնաժողովը կազմված է եղել 2 անձից, չի ընթերցվել մասնակցող կազմակերպությունների ցանկը, իսկ փաթեթները բացելու ժամանակ չի ներկայացվել մասնակից կազմակերպությունների գնային առաջարկները, վերջում չի հայտարարվել նաև նիստի փակման մասին: Նիստի ժամանակ Ընկերությունների ներկայացուցիչների կողմից հնչեցրած զգուշացումներին՝ նիստի ընթացակարգի խախտման վերաբերյալ, ստացվել է պատասխան հանձնաժողովի քարտուղարի կողմից, որ կարող եք բողոքարկել:

2. <u>Այնթապի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Կենտրոնը 11.04.2017թ.-ին Պատվիրատուին ուղղարկված գրությամբ՝ խնդրել էր եռօրյա ժամկետում տալ կարծիք «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ, սակայն եռօրյա ժամկետում պատասխան չի ստացվել:

ԳԲԽ-48/17 բողոքը քննող հանձնաժողովի 14.04.2017թ. ժամը 15:30-ին առաջին նիստի ժամանակ Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ՝ Ս.Բաղդասարյանը, առարկել է բողոքի դեմ, և հայտնել, որ չէր կարով հայտերը վերցներ 09:00-ից շուտ այն պատճառով, որ Այնթապի համայնքապետարանի աշխատանքային օրը սկսվում է ժամը 09:00-ին, իսկ 9:00-ից հետո վերցնելու դեպքում կխախտեր «Գնումների մասին» ՀՀ օրենքը:

3. **<u>ԳԲԽ-48/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 19.04.2017թ. եզրակացությունը և առաջարկել է «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և «Գոց» ՍՊԸ-ի 21.03.2017թ.-ի բողոքը բավարարել՝ դադարեցնել գնման ընթացակարգ հայտարարելու մասին «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ չեղյալ հայտարարել գնման ընթացակարգը:

4. **<u>ԳԲԽ-48/17 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ԳԲԽ-48/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Այնթապի համայնքապետարանի կողմից «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցել է նաև «Դուստր Մոնիկա» ՍՊԸ-ն:

2. Այնթապի համայնքապետարանի կարիքների համար Այնթապ համայնքի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 4.2 կետի համաձայն՝ ընթացակարգի հայտերը անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին ոչ ուշ, քան ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակմանը հաջորդող օրվանից հաշված 7-րդ աշխատանքայի օրվա ***09:00-ն***:

3. Այնթապի համայնքապետարանի կարիքների համար Այնթապ համայնքի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7.1 կետի համաձայն՝ հայտերի բացումը տեղի է ունենալու գնահատող հանձնաժողովի բացման նիստում, այն է՝ 07.04.2017թ. ժամը ***09:00-ն***:

4. Այնթապ համայնքապետարանի ներկայացրած տեղեկատվությունը՝ համայնքապետարանի աշխատանքային ժամերն են՝ 09:00–18:00:

5. «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից տրված գրավոր պարզաբանման՝ Այնթապ համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» մրցույթի բացման

օրը, որը տեղի է ունեցել 07.04.2017թ. 09:00-ին, գնումների համակարգող Ա. Բաղդասարյանը Այնթապ համայնքի վարչական շենք է մտել առավոտյան ժամը 09:00-ին և հայտերը կարող էր գրանցել 09:01-ին, բայց քանի որ հայտերի ներկայացման վերջնաժամկետը 09:00-ն է եղել, օրենքով չեր կարող վերցնել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

- Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

- Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

- Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:
- Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ եթե սույն հոդվածի 2-րդ մասը չի կիրառվում, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է, որ հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ընդ որում, հայտարարությունը ենթակա չէ փոփոխման: Եթե կիրառվում է սույն հոդվածի 2-րդ մասը, ապա գնումների կամ նախաորակավորման հայտարարության մեջ նշվում է այդ սահմանափակման մասին:
- Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: **Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:** Սահմանափակ ընթացակարգի հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում Պատվիրատուն, հայտերի բացումը սահմանելով ժամը ***09:00-ն,*** դրանով իսկ խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերը, ինչպես նաև Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը:

Մասնավորապես, ինչպես արդեն նշվել է, Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Ըստ Այնթապ համայնքապետարանի ներկայացրած տեղեկատվության՝ համայնքապետարանի աշխատանքային ժամերն են՝ 09:00–18:00: Ուստի հայտերի բացման նիստը ժամը 09:00-ին նշանակված լինելու պայմաններում փաստաթղթային եղանակով հայտ ներկայացնելը մասնակցի համար հնարավար էր լինելու միայն մինչև նախորդ օրվա 18:00-ն, այսինքն հայտերի ներկայացման վերջնաժամկետը ստացվում է հայտերի բացման նախորդող օրը, ինչի արդյունքում հայտերի բացման օրը և ժամը չի համընկնում դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ի և «Գոց» ՍՊԸ-ի 10.04.2017թ. բողոքը բավարարել.

Դադարեցնել գնման ընթացակարգ հայտարարելու մասին «ԱՄԱՀ-ՊԸԱՇՁԲ-17/1» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ չեղյալ հայտարարել գնման ընթացակարգը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամներ՝ **Արամ Գրիգորյան**